



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան

«19» 06 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 078 - 24

Ձեռնարկողը՝

«ԷՄ ԶԻ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ

Կոփայքի մարզ, Բալախովիտ համայնք, 2 փ, 43 փ

Գործունեությունը՝

Սարանիստի բազալտների հանքավայրի 2-րդ
տեղամասի C₁ բլոկի օգտակար հանածոյի
արդյունահանման շրջակա միջավայրի վրա
ազդեցության գնահատման հաշվեկրկություն
Կոփայքի մարզ

Առդիր եզրակացությունը՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵՋՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՋԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 078 - 24

«11» հունիսի 2024թ.

**Սարանիստի բազալտների հանքավայրի 2-րդ տեղամասի C₁ բլոկի
օգտակար հանածոյի արդյունահանման շրջակա միջավայրի վրա
ազդեցության գնահատման հաշվետվություն**

Պատվիրատու՝	«ԷՄ ԶԻ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն և կից փաստաթղթեր
Գործունեության կատեգորիա՝	«Ա»
Տեղադրման վայրը՝	Կոտայքի մարզ, Աբովյան համայնք, Կամարիս և Գեղաշեն բնակավայրեր

Ներածական մաս. Սարանիստի բազալտների հանքավայրի 2-րդ տեղամասի C₁ բլոկը գտնվում է Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Կամարիս և Գեղաշեն գյուղերի վարչական սահմաններում, Կամարիսի բնակելի գոտուց մոտ 6.3 կմ, Գեղաշենից՝ մոտ 3.7 կմ և Զովքից՝ 5.6 կմ հեռավորությունների վրա: Տեղակայված է Աբովյան քաղաքից 17 կմ դեպի արևելք և հարավ-արևելք, որին միացած է ասֆալտապատ և մասամբ գրունտային ճանապարհներով: Մոտակա երկաթուղային կայարանն Աբովյանն է:

Օգտակար հանածոների արդյունահանման համար նախատեսված տարածքի հողերի նպատակային նշանակությունը գյուղատնտեսական է, գործառնական նշանակությունը՝ արոտավայր:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 14-րդ /ՀՕ-110/ հոդվածի 4-րդ մասի, 2-րդ կետի գ. ենթակետի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Ա կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Հանքավայրը տարածվում է Քանաքեռի սարահարթի երկայնքով՝ զբաղեցնելով նրա լեռնային մասը՝ խորը կիրճերով և բարձր լեռնաշղթաներով: Հանքավայրի բացարձակ նիշերն են՝ 2100-2300 մ: Շրջանի երկրաբանական կառուցվածքը ներկայացված է վերին երրորդական և չորրորդական ժամանակաշրջանի հրաբխային և նստվածքային ապարներով, ինչպես նաև ժամանակակից նստվածքային առաջացումներով:

Լեռնագրական տեսակետից տարածաշրջանը հարում է Արագածի լեռնազանգվածի արևելյան եզրամասում տարածված Կոտայքի հրաբխային սարավանդին: Հանքավայրի բազալտները ներկայացված են գրեթե հորիզոնական և մասամբ թեթև ռելիեֆի վրա տեղակայված մարմիններով: Բազալտները տարածվում են արևելքից դեպի արևմուտք:

Հայցվող տարածքում բացակայում է անտառային ծածկույթը, գետային ցանցը, շինարարական կառույցները և բնական ու պատմամշակութային հուշարձանները:



Տարածքը գտնվում է ցուրտ կլիմայական շրջանում, որին բնորոշ են զով ու քամոտ ամառները և ցուրտ, քամոտ ու խոնավ ձմեռները: Մթնոլորտային տեղումների տարեկան միջին քանակը 666 մմ է, միջին տարեկան խոնավությունը 71% է, օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը կազմում է +35°C, իսկ նվազագույնը՝ -23°C, քամու տարեկան միջին արագությունը՝ 2.8մ/վրկ:

Նախատեսվող գործունեության տարածքում բացակայում են բնական ջրային մակերևույթային հոսքերը: Ամենամոտ գտնվող ջրային հոսքերը Հրազդան (17 կմ) և Ազատ (8 կմ) գետերն են: Համաձայն նախագծի՝ Սարանիստի բազալտի հանքավայրի ջրաերկրաբանական պայմանները շատ պարզ են, գրունտային ջրերը բացակայում են: Տարածքում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ և կենդանատեսակներ, հազվագյուտ, վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ չկան:

Ըստ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի կարծիքի, տարածքում պատմական և հնագիտական հուշարձանները բացակայում են:

Բազալտների մերկացումները զբաղեցնում են տարածքի գրեթե 50%-ը, ինչի պատճառով հողերը չի օգտագործվու գյուղատնտեսական նպատակներով: Մակաբացման ապարները ներկայացված են՝ հողմահարված բազալտներով և խճի, հրաբխային ապարների բեկորներ և գլաքարեր պարունակող դեյուվիալ-պրոյուվիալ ավազակավերով, որոնք պահեստավորվելու են լեռնային նախապատրաստական աշխատանքների ժամանակ՝ հետագայում օգտագործվելու են խախտված տարածքների ռեկուլտիվացիայի համար:

Սարանիստի բազալտների հանքավայրի հաշվեկշռային պաշարները հաստատվել են ՀԽՍՀ ՊՏՀ-ի կողմից 1991թ. հունիսի 21-ի N 330 արձանագրությամբ, ընդհանուր A+B+C₁ կարգերով՝ 6002.4 հազ.մ³ քանակով, այդ թվում՝ հանքավայրի 2-րդ տեղամասի պաշարները ընդհանուր A+B+C₁ կարգերով 4524.5 հազ.մ³ (ըստ կարգերի՝ A կարգով – 644.2 հազ.մ³, B կարգով – 768.7 հազ.մ³ և C₁ կարգով – 3111.6 հազ.մ³):

Սարանիստի բազալտների հանքավայրի 2-րդ տեղամասը չի շահագործվել և տեղամասի մնացորդային պաշարները 2023թ. հունվարի 1-ի դրությամբ անփոփոխ են:

Բազալտների ուսումնասիրությունը և որակի գնահատումն իրականացվել է «Շինարարական քարեր տուֆերից, բազալտներից և տրավերտիններից» 100-95 ՀՍ-ի, իսկ շինարարական քարերի համար ոչ պիտանի անկանոն տեսքի և փոքր չափերի բազալտները՝ «Խիճ և կոպիճ խիտ լեռնային ապարներից շինարարական աշխատանքների համար» 8267-95 և «Ավազ շինարարական աշխատանքների համար» 8736-2014 ՀՍ ԳՈՍՏ-երի տեխնիկական պահանջների համաձայն:

Հանքավայրի 2-րդ տեղամասի C₁ բլոկի ծայրակետային կորդինատական համակարգը ներկայացված է ARM WGS 84-ով: Անկյունային կետերի կորդինատներն են.

Կետերի համարները	X	Y	Կետերի համարները	X	Y
1	4452144	8480908	8	4452025	8480000
2	4452014	8480817	9	4452050	8479970
3	4451840	8480822	10	4452085	8479950
4	4451856	8480689	11	4452100	8479960
5	4451867	8480594	12	4452110	8479985
6	4451883.6	8480464	13	4452180	8480284
7	4451950	8480284	14	4452194	8480594



Հանքավայրի լեռնաերկրաբանական բարենպաստ պայմանները, բազալտի շերտի սակավաթեք և փոքր խորության վրա տեղադրված լինելու հանգամանքները կանխորոշել են դրա՝ բաց եղանակով մշակումը:

Նախագծվող բացահանքը վերջնական դիրքում ունի հետևյալ պարամետրերը.

- բացահանքի առավելագույն երկարությունը մակերևույթում՝ մոտ 950.0 մ,
- բացահանքի առավելագույն լայնությունը մակերևույթում՝ մոտ 335.0 մ,
- մշակվող բազալտների հաստաշերտի միջին հզորությունը՝ 13.0 մ,
- բացահանքի առավելագույն խորությունը՝ մոտ 75 մ,
- բացահանքի նվազագույն խորությունը՝ մոտ 30 մ,
- բացահանքի համար օտարման ենթակա մակերեսը՝ 21.6 հա,
- հանքաստիճանի բարձրությունը բացահանքի վերջնական դիրքում՝ 5 մ,
- հանքաստիճանի թեքությունը՝ 85-90°,
- անվտանգության բերմայի լայնությունը՝ 2 մ,
- բացահանքի կողի առավելագույն թեքությունը՝ 62°:

Մարվող պաշարները հանքավայրի 2-րդ տեղամասի C₁ բլոկում կազմում են 3111.6 հազ. մ³, կորզվող պաշարները՝ 2761.3 հազ. մ³, տարեկան մարվող պաշարները՝ 158.7 հազ. մ³, իսկ օգտակար հանածոյի կորզման գործակիցը՝ 0.89:

Բացահանքի տարեկան արտադրողականությունն ըստ մակաբացման ապարների կկազմի՝ $386512/20=19.3$ հազ. մ³:

Բացահանքի շահագործման ժամկետը 20 տարի է, աշխատանքային ռեժիմը շուրջտարյա 305 օր, միահերթ, վեցօրյա աշխատանքային շաբաթով:

Շահագործման նպատակով բացահանքային դաշտի բացումը նախատեսվում է իրականացնել հետևյալ կերպ՝ 2170-2230 մ նիշ ունեցող հորիզոնները կիսախրամներով, իսկ 2155-2165 մ նիշ ունեցողները՝ արտաքին խրամներով:

Բոլոր հորիզոնները նախատեսվում է բացել մուտքային ավտոճանապարհներից՝ կտրող խրամի միջոցով:

Քանի որ տեղամասում արդեն իսկ առկա են մոտեցող ավտոճանապարհները, լեռնակապիտալ աշխատանքներն ընդգրկում են.

- մակաբացման ապարների հեռացում՝ 11191 մ³ ծավալով,
- օգտակար հանածոյի արդյունահանում՝ 1919 մ³ ծավալով:

Բացահանքի շինարարական շրջանում բացվում և աշխատանքային վիճակի են բերվում 2230.0 և 2236.0 մ հատակի բացարձակ նիշ ունեցող աստիճանները:


Տեղամասի շահագործումը նախատեսվում է իրականացնել խորացող մշակման համակարգով՝ աշխատանքային աստիճանի H_ա = 5 մ բարձրությամբ և ներքին ու արտաքին լցակույտառաջացմամբ, առանց հորատապայթեցման աշխատանքների:

Հանութային աշխատանքները նախատեսվում է կատարել ընդլայնական միակողանի մշակման համակարգով:

Մշակման համակարգի տարրերը հաշվարկված են՝ համաձայն արդյունահանման աշխատանքների տեխնոլոգիական սխեմայի: Դրանք են.

- ա) աստիճանի բարձրությունը՝ 5 մ,
- բ) աշխատանքային հրապարակի նվազագույն լայնությունը՝ 15 մ,
- գ) հանքաստիճանի աշխատանքային ճակատի երկարությունը՝ L = 100 մ:

Մակաբացման ապարների հեռացումը, լցակույտաձևավորումը նախատեսվում է իրականացնել Komatsu D5-18 մակնիշի բուլդոզերով: Դրանք նախ տեղափոխվում են 15-20 մ հեռավորության վրա և կուտակվում: Այնուհետև Komatsu PC 400 LC-7SE մակնիշի էքսկավատորով բարձրվում են KamA3 43118 մակնիշի ավտոինքնաթափի մեջ ու տեղափոխվում արտաքին լցակույտ:



Մակաբացման ապարների տարեկան ծավալը կազմում է 19.3 հազ մ³, իսկ հերթափոխայինը՝ 63.0 մ³:

Մենաքարի անջատումը զանգվածից նախատեսվում է իրականացնել առանց հորատապայթեցման աշխատանքների՝ հորատասեպային եղանակով:

2-րդ տեղամասի C₁ բլոկի օգտակար հանածոյի արդյունահանման ժամանակ մակաբացման ապարների ծավալը կազմում է 386512 մ³, որոնք ներկայացված են հողմահարված բազալտներով և խճի, հրաբխային ապարների բեկորներ ու գլաքարեր պարունակող դելյուվիալ-պրոյուվիալ ավազակավերով: Մակաբացման ապարների մեծ մասը (308457 մ³-ը) նախատեսվում է տեղավորել բացահանքի հյուսիս-արևելյան հատվածում ստեղծվելիք ներքին լցակույտում՝ 2205-2230 մ բացարձակ նիշ ունեցող աստիճանների սահմաններում, իսկ մնացած 78055 հազ.մ³-ը՝ նախատեսվում է տեղափոխել 300 մ հեռավորության վրա նախատեսվող տեղամասի հարավային մասում ձևավորվելիք արտաքին ժամանակավոր լցակույտ: Ժամանակավոր արտաքին լցակույտն իր վերջնական դիրքում կունենա՝ 0-30 մ (միջինը՝ 10 մ) բարձրություն, ապարների ծավալը 1.3 փխրեցման գործակցի հաշվառմամբ կկազմի. $78055 \times 1.3 = 101472$ մ³, իսկ զբաղեցրած մակերեսը կազմելու է մոտ 1.8 հա: Ներքին լցակույտի ծավալը կկազմի՝ $308457 \times 1.3 = 400994$ մ³:

Տեղամասի շահագործման ավարտից հետո ժամանակավոր լցակույտից ապարները տեղափոխվելու են բացահանքի մշակված տարածություն և փոխվելու են դրա հատակին:

Բացահանքի շահագործման ավարտից հետո իրականացվելու է խախտված հողատարածքների վերականգնում՝ տեխնիկական և կենսաբանական ռեկուլտիվացիա: Հարթեցման աշխատանքներ կատարվելու է արտադրական հրապարակում և բացահանքերի հատակի ողջ մակերեսով՝ 21.6 հա տարածքում:

Խախտված հողատարածքների վերականգնման համար նախատեսված ծախսերը կկազմեն՝ տեխնիկական /34360.81 հազ. ՀՀ դրամ/ և կենսաբանական /10809.2 հազ. ՀՀ դրամ/ ռեկուլտիվացիայի իրականացում:


Բացահանքի շահագործման ընթացքում առաջանալու են բնապահպանական տեսակետից տարբեր վտանգավորության թափոններ.

- ընդերքօգտագործման թափոններ /փխրուն մակաբացման ապարներ/, որը կազմում է՝ 19325.6 մ³/տարի,

- ավտոտրանսպորտային և տեխնիկական միջոցների, մեխանիզմների շահագործման արդյունքում՝ օգտագործված շարժիչների բանեցված և դիզելային յուղերի մնացորդներ, որոնք հավաքվելու են առանձին մետաղական տարաների մեջ և պայմանագրային հիմունքներով հանձնվելու են յուղեր և քսայուղեր վերամշակող ընկերություններին,

- պինդ կենցաղային թափոնները (կենցաղային աղբ), որոնք կուտակվելու են տարածքում առկա աղբամանների մեջ և տեղափոխվելու են մոտակա աղբահավաք կետեր, և այլն:

Գործունեության իրականացման ընթացքում ջուրն օգտագործվելու է խմելու (154.02 մ³/տարի, օրականը՝ 0.505մ³/օր), և տեխնիկական (21.7 հազ.լ) նպատակներով: Տեխնիկական նպատակով ջուրն օգտագործվելու է ճանապարհների, արտադրական հրապարակների, լցակույտերի, 10820 մ² մակերեսով ընդհանուր տարածքների փոշենստեցման համար: Խմելու ջրի մատակարարումը կատարվելու է ավտոցիստեռնով՝ պայմանագրային հիմունքներով: Կենցաղային կեղտաջրերը՝ 0.43 մ³ օրական քանակությամբ, հավաքվելու են բետոնային լցարանում, որը պարբերաբար հեռացվելու է մասնագիտացված կազմակերպության կողմից: Տեխնիկական և խմելու ջրի մատակարարումը նախատեսվում է իրականացնել հարևան՝ ամենամոտ բնակավայրերից:



Հանքավայրի բաց եղանակով շահագործման ժամանակ արտադրական հոսքաջրեր չեն առաջանալու:

Հաշվետվությունում ներառված է զրոյական և այլընտրանքային տարբերակների նկարագրությունը, ընտրված տարբերակի հիմնավորումը:

Հանքավայրի արդյունահանման աշխատանքների հնարավոր բացասական ազդեցությունները կապված են լինելու լեռնակապիտալ աշխատանքների, արդյունահանման, բեռնման-բեռնաթափման, տեխնիկական միջոցների շահագործման արդյունքում՝ աղմուկի, օդային ավազան վնասակար նյութերի արտանետումների, ջրային և հողային ռեսուրսների հնարավոր աղտոտման, բուսական և կենդանական աշխարհի, լանդշաֆտի փոփոխության և թափոնների առաջացման հետ:

Բացահանքի շահագործման ընթացքում տրանսպորտի աշխատանքից մթնոլորտ են արտանետվելու փոշի և ծխագազեր, դիզելային շարժիչներով աշխատող մեքենաներից՝ ազոտի, ածխածնի օքսիդներ և ածխաջրածիններ: Համաձայն ՇՄԱԳ հաշվետվությամբ ամրագրված մթնոլորտում վնասակար նյութերի ցրման հաշվարկների արդյունքների («Էկո ցենտր» ծրագիր)՝ սպասվելիք գետնամերձ կոնցենտրացիաները գտնվում են բնակելի գոտիների համար սահմանված նորմերում:

Շահագործման ընթացքում նախատեսվում է օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից, բուսական և կենդանական աշխարհի պահպանման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի, արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի իրականացում:

- փոշենստեցման նպատակով ճանապարհների և արտադրական հրապարակի ջրում տարվա չոր և շոգ եղանակներին՝ օրը 3 անգամ,

- բոլոր տեսակի մեքենաների և սարքավորումների վրա գազազտիչ սարքերի, ձայնախլացուցիչների տեղադրում, մեքենաների սարքին վիճակում շահագործում,

- տեխնիկական միջոցների սպասարկում նախապես որոշված սպասարկման կետերում,

- օգտագործված յուղերի ու քսայուղերի, նավթամթերքների առանձին տարաների մեջ հավաքում, պահում՝ բացահանքի արտադրական հրապարակի հատուկ հատկացված վայրում,

- մաշված անվադողերի, կապարե կուտակիչների հանձնում՝ լիցենզիավորված մասնագիտացված ընկերություններին՝ պայմանագրային հիմունքներով, կամ նվիրաբերում ՀՀ զինված ուժերին,

- շինարարական տեխնիկայի սպասարկման և կայանման վայրերում ավազի կամ մանրախճի տեղադրում՝ ջրային ռեսուրսների մեջ արտահոսքը կանխելու նպատակով,

- մթնոլորտային օդ արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ օգտակար հանածոյի արդյունահանման ընթացքում՝ շաբաթը մեկ անգամ,

- տեխնիկա-տրանսպորտային միջոցների երթևեկ՝ բացառապես գոյություն ունեցող ճանապարհներով,

- Կառավարության 2014թ.-ի հուլիսի 31-ի N781-Ն որոշման դրույթների իրականացում՝ պահպանության ենթակա բուսատեսակների պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում,

- աշխատողների առողջության և անվտանգության ապահովում, արտակարգ իրավիճակների պատրաստվածություն և այլն:

Պատճառաբանական եզրահանգումներ. Ամփոփելով գնահատման և փորձաքննության արդյունքները՝ պետք է նշել, որ նախագիծը մշակվել է բնապահպանական և ընդերքօգտագործման ոլորտները կարգավորող ՀՀ օրենսդրական պահանջներին և նորմատիվաիրավական ակտերին համապատասխան: Արդյունահանման աշխատանքները կազմակերպելու համար, հիմնականում օգտագործվելու են գոյություն



ունեցող ճանապարհները: Հանքավայրի տարածքում գրունտային ջրերը բացակայում են, իսկ լեռնային աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում:

Փորձաքննության ներկայացված՝ գնահատման արդյունքում վերլուծվել են հնարավոր անցանկալի բնապահպանական ազդեցությունները շրջակա միջավայրի բաղադրիչների և բնակչության առողջության ու սոցիալ-տնտեսական պայմանների վրա, կատարվել է հնարավոր տնտեսական վնասի գնահատում, ինչպես նաև մշակվել է ազդեցության նվազեցման և կանխարգելման հիմնական ուղղությունները:

Հաշվետվության փորձաքննական գործընթացին մասնակցել են համապատասխան մասնագիտական կառույցները՝ շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, ներքին գործերի, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն: ՇՄԱԳ-ին կրից փաստաթղթերում առկա են «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի դրական փորձաքննական եզրակացությունը, «ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ» ՊՈԱԿ-ի դրական կարծիքը:

Փորձաքննության ընթացքում հաշվետվությունը դիտողություններով և առաջարկություններով լրամշակվել է: Փորձաքննության բոլոր փուլերում, օրենսդրությամբ սահմանված կարգով, Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Կամարիս և Գեղաշեն բնակավայրերում իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինը և հանրությունը հավանություն են տվել նախագծի իրականացմանը: Հանրային քննարկումներում բնակիչների կողմից մտահոգություն է առաջացրել խմելու ջրի աղբյուրների առկայության և հանքարդյունահանման աշխատանքների ազդեցությունները վերջիններիս վրա: Ընկերության կողմից հաշվետվությունում ներառվել է Ջրաերկրաբան, երկրաբանության գիտությունների թեկնածու Ա. Աղինյանի համապատասխան ուսումնասիրությունը՝ եզրակացությունը, համաձայն որի՝ Սարանիստ բնակավայրի խմելու համար օգտագործվող աղբյուրները գտնվում են բացահանքի ծայրամասից հյուսիս-արևմուտք 1 կմ հեռավորության վրա՝ Բեգակլու լեռան ջրբաժանի հակառակ կողմում: Աղբյուրների ջրերի սնումը կատարվում է արևելյան լանջերի ջրհավաք ավազանից, իսկ բացահանքը գտնվում է ջրբաժանի հակառակ կողմում՝ ինչով պայմանավորված՝ բացառվում է բացահանքի ազդեցությունն աղբյուրների վրա: Ելնելով բնակչության և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև փորձաքննության գործընթացում ներկայացված առաջարկություններից՝ հանքարդյունահանման աշխատանքների եղանակը ընտրվել է առանց հորատապայթեցման աշխատանքների:

Նախատեսվող գործունեության համար գործող նորմերով ապահովված է սանիտարապաշտպան գոտու ապահովման համար պահանջվող չափը:

Փորձաքննական պահանջներ

1. Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել ՇՄԱԳ հաշվետվությունում և նախագծային փաստաթղթերում ամրագրված տեխնոլոգիական նախագծման նորմերին:
2. Պահպանել գնահատման հաշվետվությամբ ամրագրված միջոցառումների և մոնիթորինգի իրականացումը, դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ, պահպանելով բնապահպանական բոլոր նորմերը:
3. Գործունեության ընթացքում իրականացվող շրջակա միջավայրի բաղադրիչների (ջուր, օդ, հող, կենդանական և բուսական աշխարհ և այլն), մոնիթորինգի արդյունքները,



հետնախագծային վերլուծության ծրագիրը համապատասխան պահանջի դեպքում պետք է տրամադրվի պետական շահագրգիռ մարմիններին և հանրությանը:

4. Շահագործման ընթացքում առաջացող տարբեր տեսակի թափոնների հավաքումը և հեռացումը (այդ թվում վտանգավոր թափոններ՝ յուղեր, քսայուղեր, անվադողեր և այլն) անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Պահպանել նախագծով նախատեսված տեխնիկա-տեխնոլոգիական լուծումները, մասնավորապես բացառել հանքավայրում պայթեցման աշխատանքները:

6. Ապահովել հաշվետվությամբ ամրագրված տեխնիկական և կենսաբանական ռեկուլտիվացիայի աշխատանքների իրականացումը:

7. Մինչև նախատեսվող գործունեության իրականացումը, ջարդիչ տեսակավորող կայանի նախագծային փասթաթղթերը սահմանված կարգով ներկայացնել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

ԵԶՐԱՓՈՒԿ ԻՉ ՄԱՍ

«ԷՄ ԶԻ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Սարանիստի բազալտների հանքավայրի 2-րդ տեղամասի C₁ բլոկի օգտակար հանածոյի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի փոխտնօրեն՝



Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝



Արմինե Վարդանյան